Մտավոր սեփականության (ՄՍ) վեճերի լուծումը միջազգային արբիտրաժի միջոցով:

Պատմականորեն, մտավոր սեփականության վերաբերյալ միջազգային վեճերի մեծամասնությունը որոշվել է ներպետական դատարանների, այլ ոչ՝ արբիտրաժային տրիբունալների կողմից: Սա մասամբ պայմանավորված էր նրանով, որ արբիտրաժը պայմանագրի արդյունք է, և մտավոր սեփականության հետ կապված շատ վեճերում, ինչպիսիք են մտավոր սեփականության ոլորտում սեփականության իրավունքի կամ այլ իրավունքների խախտման վերաբերյալ վեճերում բացակայել են պայմանագրային հարաբերությունները: Ավելին, որոշ օրենսդրություններ սահմանափակել են մտավոր սեփականության հետ կապված որոշ հարցերի արբիտրունակությունը (արբիտրաժին ենթակա լինելը)՝ նման իրավունքների շուրջ վեճերը դիտարկելով պետական քաղաքականության հարց, որը լավագույնս լուծվում է ներպետական դատարանների կողմից:
Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում իրադրությունը փոխվել է: Թեև մտավոր սեփականության վեճերի մի մասը դեռևս հիմնականում լուծվում են ներպետական դատարաններում, մտավոր սեփականության հետ կապված գործերի թիվը, որոնք արբիտրաժի քննությանն են հանձնվում, շարունակում է աճել: Ընդհանուր իրավունքի շատ երկրների օրենսդրությամբ կամ դատական նախադեպերով միտումն ուղղված է մտավոր սեփականության վեճերն արբիտրաժային կարգով լուծելը թույլ տալուն: ՄՍՀԿ (WIPO) Արբիտրաժի և հաշտարարության կենտրոնի գործերի ծանրաբեռնվածությունը ցույց է տալիս այս միտումը, որտեղ գործերը զգալիորեն աճել են վերջին տարիներին: ՄՍՀԿ-ին ուղղված դիմումները (որոնք ներառում են հաշտարարությունը, փորձագետների որոշումները, ինչպես նաև արբիտրաժային գործերը) 2018-ից մինչև 2019 թթ. աճել են ավելի քան 15 %-ով, իսկ 2012 թվականից ի վեր՝ ավելի քան 450 %-ով:
Ներպետական օրենսդրություններում կատարված վերջին փոփոխությունները, ինչպես օրինակ՝ Սինգապուրում, Հոնկոնգում և այլուր, ուղղված են արբիտրաժն ավելի գրավիչ և արդյունավետ դարձնել մտավոր սեփականության միջազգային վեճերը լուծելու համար: Արբիտրաժային հաստատություններն իրենց հերթին ընթացակարգեր են մշակում՝ օգտատերերի համար արբիտրաժն ավելի գրավիչ դարձնելու, արբիտրաժը մտավոր սեփականության վեճերի լուծման համար ավելի հարմար դարձնելու համար: Արբիտրաժային հաստատությունները ինչպես օրինակ՝ Շվեյցարիայի արբիրաժային կենտրոնը և Սինգապուրի միջազգային արբիտրաժային կենտրոնը, ստեղծել են արբիտրաժային պանելներ, որոնք մասնագիտացած են մտավոր սեփականության հարցերում: Ավելին, արբիտրաժային հաստատությունների մեծ մասը որդեգրել է այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են արագացված ընթացակարգը կամ արտակարգ միջոցների արբիտրաժը, որոնք կարող են ծառայել որպես մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության համար արդյունավետ միջոցներ:
Արբիտրաժը հատկապես հարմար է մտավոր սեփականության համատեքստում միջազգային և անդրսահմանային պայմանագրային վեճերը լուծելու համար, ներառյալ այնպիսի հարցեր, ինչպիսիք են գլոբալ լիցենզավորման համաձայնագրերը, միջսահմանային համատեղ ձեռնարկությունները և անդրսահմանային M&A գործարքները, որոնք ներառում են մտավոր սեփականության իրավունքներ: Արբիտրաժային վարույթները հայտնի են իրենց արագությամբ և արդյունավետությամբ: Տվյալները վկայում են արբիտրաժի՝ դատական գործընթացների համեմատ արդյունքների հասնելու էականորեն ավելի կարճ ժամկետների և արդյունավետության մասին:

Եզրափակելով՝ արբիտրաժը շնորհիվ իր ճկունության և արդյունավետության ավելի գրավիչ է դարձել մտավոր սեփականության միջազգային վեճերը, հատկապես՝ բարդ միջսահմանային վեճերը լուծելու համար: Օրենսդրական փոփոխությունների, զարգացող ինստիտուցիոնալ ընթացակարգերի և նվիրված արբիտրների աջակցությամբ արբիտրաժը ի հայտ է գալիս որպես նախընտրելի ընտրություն այն կողմերի համար, ովքեր ձգտում են ժամանակին և արդյունավետ լուծել իրենց մտավոր սեփականության վեճերը համաշխարհային հարթակում:
Հաշվի առնելով մտավոր սեփականության վեճերի բարդ էությունը, AMCA-ն առաջարկում է ժամանակակից բարդ, իրավական հարցերի լուծումը միջազգային արբիտրաժին հանձնելու հնարավորությունը՝ իր բոլոր առավելություններով:

Ունե՞ք հարցեր, կապ հաստատեք մեզ հետ այսօր՝ խորհրդատվություն նշանակելու համար:

☎ +374 11 201 410
info@amca.am
Հայաստան, Երևան, Արշակունյաց 51, տարածք 47

Աղբյուր՝ GAR, The Guide to IP Arbitration
https://nyiac.org/wp-content/uploads/2021/03/GAR_Guide_to_IP_Arbitration_1st_Edition.pdf